ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2019 Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 21-23-Ը ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ԵՎ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԻՌԼԱՆԴԻԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **ԱՆՈՒՆԸ, ԱԶԳԱՆՈՒՆԸ**
   Հակոբ Վարդանյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**
   ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**
   Քաղաք Լոնդոն, Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն, 2019 թվականի նոյեմբերի 21-ից 23-ը

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**
   Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ (ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ Ո՞Ր ԽՆԴՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՒՂՈՒՄԸ).**
   Մասնակցություն ԵՄ Արևելյան գործընկերության ներդրումային գագաթնաժողովին և Արևելյան Եվրոպայի էներգախնայողության և շրջակա միջավայրի գործընկերության հիմնադրամի օժանդակողների 9-րդ վեհաժողովին

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**
   2019թ. նոյեմբերի 22-ին Լոնդոնում տեղի ունեցավ Արևելյան Եվրոպայի էներգախնայողության և շրջակա միջավայրի գործընկերության հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) օժանդակողների իններորդ վեհաժողովը, որին մասնակցում էին ինչպես Հիմնադրամին օժանդակող երկրների ներկայացուցիչները, այնպես էլ վերջինիս շահառու երկրների՝ մասնավորապես. Ուկրաինայի, Մոլդովայի, Բելառուսի, Վրաստանի ու Հայաստանի ներկայացուցիչները:
   Նիստի ընթացքում հաստատվեց Հիմնադրամի 2018թ. ֆինանսական հաշվետվությունը: Քննարկվեցին Ուկրաինայի, Մոլդովայի, Հայաստանի, Վրաստանի և Բելառուսի համար հասանելի ֆինանսական միջոցների հոսքերը, հաստատված ծրագրերի առաջընթացն ու նոր ծրագրերի հաստատումը:
   Հայաստանի վերաբերյալ նստաշրջանի ընթացքում Հիմնադրամի կողմից ներկայացվեցին Հայաստանի համար խոստացված և վճարված միջոցների շարժը, ըստ որի ներկայումս Հայաստանի համար հասանելի է 3.5 մլն եվրո և վճարման ենթակա են դեռ ԵՄ կողմից խոստացված 10մլն եվրո դրամական միջոցներից 5-ը:
   Ներկայացվեցին արդեն իսկ հաստատված Երևանի քաղաքային լուսավորության ծրագրի, Կոտայքի և Գեղարքունիքի կոշտ թափոնների կառավարման, Երևանի կոշտ թափոնների կառավարման և Երևանի էներգաարդյունավետության ծրագրերի առաջընթացները և իրականացման ժամանակացույցերը:
   Վեհաժողովի ընթացքում Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի կողմից ներկայացվեց Գյումրու քաղաքային լուսավորության ծրագրի դրամաշնորհային համաձայնագրի ստորագրման ճանապարհային քարտեզը, որի շրջանակներում նախատեսվում է 2 մլն եվրո գումարի չափով դրամաշնորհ Գյումրիի փողոցների լուսավորության համար:
   ԵՄ Արևելյան գործընկերության նախաձեռնության 10-ամյակի շրջանակներում Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի կողմից կազմակերպվել էր նաև Արևելյան գործընկերության առաջին ներդրումային գագաթնաժողովը, որը միտված էր

բացառությամբ Արևելյան Եվրոպայի և Հարավային Կովկասի երկրների ներդրումային հնարավորությունները և մարտահրավերները: Գագաթնաժողովի օրակարգում նախատեսված էր «Խթանելով աճը. հնարավորություններ ներդրողների համար» խորագրով լիագումար քննարկում, որի ընթացքում ելույթով հանդես է եկել Հանրապետության նախագահ Արմեն Սարգսյանը: Վերջինիս ելույթում անդրադարձ է կատարվել Հայաստանում առկա մարդկային կապիտալի և ներուժի առկայությանը, որը աշխարհագրական դիրքի և բնական ռեսուրսների սահմանափակության պայմաններում կարող է Հայաստանը գրավիչ դարձնել օտարերկրյա ներդրողների համար: Նշվել է նաև Հայաստանի յուրահատուկ աշխարհաքաղաքական դիրքը, կարևորելով այն հանգամանքը, որ Հայաստանը, լինելով Եվրասիական տնտեսական միության անդամ, կարողացել է սերտ հարաբերություններ կառուցել ԵՄ-ի, Մերձավոր Արևելքի և Կենտրոնական Ասիայի երկրների հետ:

7. **ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ**

Վեհաժողովի ընթացքում գործուղվող անձի կողմից ներկայացվեցին Հիմնադրամի և ՀՀ կառավարության միջև իրականացվող հիմնական առաջնահերթությունները, հնարավոր համագործակցության զարգացման և խորացման ուղղությունները: Բոլոր ծրագրերի ընթացիկ իրավիճակի և կատարողականի վերաբերյալ տրվեցին համապատասխան պարզաբանումներ և առաջարկություններ:

8. **ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ**

Նիստի ընթացքում հաստատվեց Հիմնադրամի 2018թ. ֆինանսական հաշվետվությունը:

9. **ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Հիմնադրամի հետ աշխատանքների շրջանակներում առավել մեծ արդյունավետություն ապահովելու համար ներկա փուլում անհրաժեշտ է ջանքեր գործադրել և հետևողական լինել արդեն իսկ հաստատված ծրագրերի պատշաճ կերպով և ժամանակին իրականացման համար: Միևնույն ժամանակ հետագայում նոր ծրագրերի առաջադրման պարագայում, կարծում ենք, որ թերևս էներգաարդյունավետության ոլորտում իրականացվող ծրագրեր կարող են առավել հաջող արդյունքներ արձանագրել. ընդ որում վերջիններս կարող են իրականացվել ոչ սուվերեն վարկավորման մեխանիզմով՝ պետության համար չառաջացնելով պարտքային բեռ: Որպես հնարավոր ուղղություն կարելի է քննարկել նաև փոքր համայքներում կանաչ քաղաքների համալիր մոտեցման կիրառումը:

10. **ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ԱՄՍԱԹԻՎԸ.**

27 նոյեմբերի 2019թ.